

8.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ
-----------	---

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Սահմանական եղանակը Բայազետի բարբառում ունի անկատար ներկա, անկատար անցյալ, վաղակատար ներկա, վաղակատար անցյալ վերլուծական ժամանակաձևերը և անցյալ կատարյալ պարզ ժամանակաձևը: Որոշ բայերի դեպքում ձևավորվում են նաև հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևեր: Այսպիսով, ապառնի դերբայի բացակայության պայմաններում բարբառն ունի սահմանական եղանակի ներկա և անցյալ ժամանակների ձևեր միայն:

Անկատար ներկան գրական հայերենի պես ձևավորվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, օրինակ՝

գ'ըրում եմ
գ'ըրում ես
գ'ըրում ա
(գ'ըրում)

գ'ըրում եմք
գ'ըրում էք
գ'ըրում են

խասնում եմ
խասնում ես
խասնում ա
(խասնում)

խասնում եմք
խասնում էք
խասնում են

Այս ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքը խոսքում հաճախ դրսևորվում է առանց օժանդակ բայի, միայն դերբայական ձևով, օրինակ՝ Էնի գ'ըրում. Վառթանը խաց ուտում. Ի՞նչ ասում: Ժխտական խոնարհման դեպքում **չ**- ժխտական մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա, բացառությամբ եզակի թվի երրորդ դեմքի, երբ **չ** - ն դրվում է դերբայի վրա. **չ**եմ գ'ըրում, **չ**ես գ'ըրում, **չ**ըգ'ըրում, **չ**ենք գ'ըրում, **չ**եք գ'ըրում, **չ**են գ'ըրում:

Անկատար անցյալը ևս իր կազմությամբ գրական հայերենի համապատասխան ձևից չի տարբերվում.

գ'ըրում ի	գ'ըրում ինք	խասնում ի	խասնում ինք
գ'ըրում իր	գ'ըրում իք	խասնում իր	խասնում իք
գ'ըրում էր	գ'ըրում ին	խասնում էր	խասնում ին

Միայն թե օժանդակ բայի անցյալի ձևերում գրականի համեմատությամբ բացակայում է **է** բաղադրիչը: Ժխտական խոնարհման դեպքում **չ**- մասնիկը բոլոր դեպքերում դրվում է օժանդակ բայի վրա. չի գ'ըրում, չիր գ'ըրում, չէր գ'ըրում, չինք գ'ըրում, չիք գ'ըրում, չին գ'ըրում:

Վաղակատար ներկան Բայագետի բարբառում ևս ձևավորվում է վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով.

գ'ըրեր են	գ'ըրեր ենք	խասեր են	խասեր ենք
գ'ըրեր ես	գ'ըրեր էք	խասեր ես	խասեր էք
գ'ըրեր ա (գ'ըրե)	գ'ըրած (գ'ըրած ա, գ'ըրեր են)	խասեր ա (խասե)	խասած (խասած ա, խասեր են)

Այս ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքում սովորական է օժանդակ բայի բացակայությունը, որն ուղեկցվում է նաև դերբայական **ր**- մասնիկի անկումով: Բայց երբ առկա է **ա** օժանդակ բայը, ապա դերբայական վերջավորությունն է **-եր**, այլ ոչ թե **-իր**, ինչպես մյուս ձևերում: Հոգնակի թվի երրորդ դեմքում հանդես է գալիս **-ած** վերջավորությամբ դերբայական ձև, որը դրսևորվում է կամ առանց օժանդակ բայի, կամ էլ օժանդակ բայի եզակի թվի ձևի հետ (Ընդունք գ'ացած. Ընդունք գ'ացած ա): Հոգնակի թվի երրորդ դեմքը կարող է ունենալ նաև կանոնավոր արտահայտություն (Ընդունք գ'ըրեր են): Եթե խոսքում օժանդակ բայը նախորդում է վաղակատար դերբային, ապա վերջինս ունենում է **-ե** վերջավորություն (յես են գ'ըրե, դ'ուլ յես գ'ըրե, էնի յա գ'ըրե, մենք ենք գ'ըրե, դ'ուլք էք գ'ըրե, ընդունք են գ'ըրե): Հոգնակի թվի երրորդ դեմքում այս դեպքում ևս ավելի տարածված է **-ած** վերջավորությամբ դերբայի գործածությունը՝ Ընդունք ա գ'ըրած: Ժխտական խոնարհման դեպքում **չ** մասնիկը դրվում է օժանդակ բայի վրա, բացառությամբ երրորդ դեմքի ձևերի, որոնցում դրվում է դերբայի վրա (չեն գ'ըրե, չես գ'ըրե, չըգ'ըրե, չենք գ'ըրե, չէք գ'ըրե, չըգ'ըրած): Հոգնակի երրորդ դեմքում գործածական է նաև կանոնավոր ձևը՝ չեն գ'ըրե:

Վաղակատար անցյալ ժամանակաձևը Բայագետի բարբառում ընդհանուր առմամբ կազմության առանձնահատկություններ չունի.

գ'ըրեր ի	գ'ըրեր ինք	խասեր ի	խասեր ինք
գ'ըրեր իր	գ'ըրեր իք	խասեր իր	խասեր իք
գ'ըրեր էր	գ'ըրեր ին (գ'ըրած ին)	խասեր էր	խասեր ին (խասած ին)

Սակայն եզակի թվի երրորդ դեմքում վաղակատար դերբայը, ի տարբերություն վաղակատար ներկա ժամանակաձևի, ունի -եր վերջավորություն, ինչպես մյուս դեմքերում: Հոգնակի թվի երրորդ դեմքում հավասարապես գործածական են -եր և -ած վերջավորություններով դերբայական ձևերը: Ժխտական խոնարհման դեպքում ժխտական մասնիկը բոլոր դեպքերում դրվում է օժանդակ բայի վրա՝ չի գ'ըրե, չիր գ'ըրե, չէր գ'ըրե, չինք գ'ըրե, չիք գ'ըրե, չին գ'ըրե (չին գ'ըրած):

Անցյալ կատարյալը Բայագետի բարբառում ևս ձևավորվում է անցյալի հիմքից՝ համապատասխան վերջավորություններով: Այդ վերջավորությունները բարբառումս ևս երկու կարգի են՝ ա) ի, իր, եց, ինք. իք, ին, բ) ա, ար, ավ, անք, աք, ան: Առաջին կարգի վերջավորություններ անցյալ կատարյալում ունենում են Ե խոնարհման ներգործական սեռի պարզ, բազմապատկական և պատճառական ածանց ունեցող և Ա խոնարհման պարզ բայերը, ընդ որում՝ Ե խոնարհման բայերի անցյալի հիմքը կարող է լինել ինչպես ցոյական, այնպես էլ պարզ: Օրինակներ՝

գ'ըրի, գ'ըրիր, գ'ըրեց, գ'ըրինք, գ'ըրիք, գ'ըրին (մաև՝ գ'ըրեցի, գ'ըրեցիր...)
տըփըռտի, տըփըռտիր, տըփըռտեց, տըփըռտինք, տըփըռտիք, տըփըռտին
մօտկըցըրի, մօտկըցըրիր, մօտկըցըրեց, մօտկըցըրինք, մօտկըցըրիք,
մօտկըցըրին

խօսացի, խօսացիր, խօսաց, խօսացինք, խօսացիք, խօսացին:

Երկրորդ կարգի վերջավորություններ ստանում են Ե խոնարհման չեզոք սեռի պարզ, Ա ածանց ունեցող, Ա խոնարհման ածանցավոր բայերը: Օրինակներ.
քընա, քընար, քընավ, քընանք, քընաք, քընան
խաքա, խաքար, խաքավ, խաքանք, խաքաք, խաքան
խասկըցա, խասկըցար, խասկըցավ, խասկըցանք, խասկըցաք, խասկըցան
վախեցա, վախեցար, վախեցավ, վախեցանք, վախեցաք, վախեցան:

Ինչպես երևում է, Ե խոնարհման պարզ բայերի դեպքում անցյալ կատարյալի վերջավորությունների տիպը որոշվում է բայի սեռով, ինչը նշանակում է, որ Բայագետի բարբառում այս ժամանակաձևում առկա են ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ: Մյուս կողմից՝ նույն բայի սեռային տարբեր դրսևորումներում անցյալ կատարյալում հանդես են գալիս տարբեր վերջավորություններ: Օրինակ, **գ'ըրել** բայը ներգործական սեռի դեպքում ունենում է առաջին տիպի (ներգործաձև) վերջավորություններ, իսկ կրավորական սեռի դեպքում՝ երկրորդ տիպի (կրավորաձև) վերջավորություններ.

գ'ըրի, գ'ըրիր, գ'ըրեց, գ'ըրինք, գ'ըրիք, գ'ըրին
գ'ըրվա, գ'ըրվար, գ'ըրվավ, գ'ըրվանք, գ'ըրվաք, գ'ըրվան

Ավելին, նույն բայի սեռային տարբեր դրսևորումները մի շարք դեպքերում արտահայտվում են միայն վերջավորություններով, առանց սեռաձանցի: Օրինակ, **թըռչել** (թըռչել) բայի սեռային տարբեր իմաստներն արտահայտվում են հետևյալ կերպ.

ներգ. սեռ - թըռչի, թըռչիր, թըռչեց, թըռչինք, թըռչիք, թըռչին
կրավ. սեռ - թըռչա, թըռչար, թըռչավ, թըռչանք, թըռչաք, թըռչան

Ի դեպ, նման բայերը վերլուծական ժամանակաձևերում նույն ձևով կարող են արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական կամ չեզոք սեռերի իմաստներ. օրինակ՝ կըխտօտում եմ – *կեղտոտում եմ* և *կեղտոտվում եմ*, թըռչում ի - *թրջում էի* և *թրջվում էի*, խեխտում ես – *խեղդում ես* և *խեղդվում ես*, ծըռե /ծըռեր ա/ - *ծռել է* և *գժվել է*, *սիրահարվել է*:

Բայագետի բարբառում ևս սահմանական եղանակի հարակատար ներկա և հարակատար անցյալ լրացուցիչ ժամանակաձևեր ունենում են վիճակ, դրություն ցույց տվող չեզոք սեռի և կրավորական բայերը.

հարակատար ներկա		հարակատար անցյալ	
քընուկ եմ	քընուկ ենք	քընուկ ի	քընուկ ինք
քընուկ ես	քընուկ էք	քընուկ իք	քընուկ իր
քընուկ ա	քընուկ են	քընուկ ին	քընուկ էր
կըրվուկ եմ	կըրվուկ ենք	կըրվուկ ի	կըրվուկ ինք
կըրվուկ ես	կըրվուկ էք	կըրվուկ իր	կըրվուկ իք
կըրվուկ ա	կըրվուկ են	կըրվուկ էր	կըրվուկ ին

Երբ ներգործական սեռի բայի հարակատար դերբայը ցույց է տալիս անշունչ առարկայի դրություն, վիճակ, հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերն ունենում են միայն երրորդ դեմքի ձևեր.

դ'ըրուկ ա	դ'ըրուկ էր	ջ'առթուկ ա	ջ'առթուկ էր
դ'ըրուկ են	դ'ըրուկ ին	ջ'առթուկ են	ջ'առթուկ ին

Ժխտական խոնարհման դեպքում, ի տարբերություն սահմանական եղանակի վերլուծական մյուս ժամանակաձևերի, հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևերի օժանդակ բայը իր դիրքը չի փոխում, հմմտ. չեմ ուտում, չէր էթում, չես նըստե, չին խըմե և նըստուկ չեմ, ջ'առթուկ չէր: Ի դեպ, այս իրողությունը առկա է և գրական արևելահայերենում՝ նստած չեմ, ջարդված չէր¹:

¹ Այս փաստը գալիս է հավաստելու, որ որոշակի հիմքեր ունեն այն լեզվաբանները, ովքեր հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմված ձևերը վերապահությամբ են համարում եղանակաժամանակային ձևեր կամ էլ ընդհանրապես դուրս են թողնում բայի խոնարհման հարացույցից: Տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 274, **Ս. Ե. Ասատրյան**, ժամանակակից հայոց լեզու (Ձևաբանություն), Եր., 1989, էջ 236-243:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Արրահամյան, Ն. Պառնասյան, Յ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ձևաբանություն, Եր., 1974:
2. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Եր. 1989:
3. Վ. Կատվալյան, Բնավանդա խանանք-չանանք, Եր., 2009:
4. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969:

ИЗЪЯВИТЕЛЬНОЕ НАКЛОНЕНИЕ В БАЯЗЕТСКОМ ДИАЛЕКТЕ

В. А. КАТВАЛЯН

Статья посвящена изучению особенностей изъявительного наклонения в баязетском диалекте.

THE INDICATIVE MOOD IN THE DIALECT OF BAYAZET

V. L. KATVALYAN

The article shows the types of expressing indicative mood tense forms in the dialect of Bayazet. It points out the peculiarities of the dialect of Bayazet in that sphere.

ԳՐԱԴԱՅՔԱՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԷԶԵՐՈՒՄ

Թ. Ա. ԱՍՈՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

19-րդ դարի կեսերին գրականության լեզվի վերաբերյալ բորբոքված բանավեճի մասին, որը հայտնի է գրապայքար անունով, շատ է գրվել: Առաջին հայացքից կարող է թվալ, թե գրապայքարի մասին ամեն ինչ արդեն ասվել է և ավելացնելու ոչինչ այլևս չկա: Սակայն այդպես չէ: Իրականում կան խնդիրներ, որոնք անհրաժեշտ լուծում են պահանջում: Փաստերը ճշգրտելու և անկողմնակալ մեկնաբանելու, համակարգելու, ի վերջո՝ գրապայքարի պատմությունը ամբողջական տեսքով ներկայացնելու անհրաժեշտություն է զգացվում: Դրա համար պետք է առանձնացնել խնդիրների հետևյալ խմբերը.

1. Պետք է որոշարկել «գրապայքար» երևույթի ընդգրկման սահմանները: Բանն այն է, որ այսօր «գրապայքար» հասկացությունն արդեն ընկալվում է և լայն, և նեղ առումներով: Նեղ առումով գրապայքարը 19-րդ դարի 2-րդ կեսին ծավալված բանավեճն է գրականության լեզվի մասին: Լայն առումով գրապայքար է ընկալվում տարբեր ժամանակներում հայերենին առնչվող այնպիսի հարցեր, ինչպիսիք էին հունաբանությունն ու լատինաբանությունը հայերենում: Գրապայքարի այսպիսի ըմբռնումը ենթադրում է, որ հարցը չպետք է դիտարկել միայն նշված բանավեճի սահմաններում: Վերջին հաշվով նշված դեպքերում էլ